

399

№ 831.

ՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Ա. ՏԱՐԻ

ВЕРНАЯ
ИСТОРИЯ
ВОСТОЧНОЕВРОПЫ
Академик Наян
СССР

„Եւ ուսուցչիք որդեաց ձերոց
խօսել զսոսա ի նստել ի տան,
եւ ի գնալ ի ճանապարհի եւ
ի ննջել եւ ի յառնել“:

V. Մ. Ը. Ժ. 19.

ՀԱՄԱՉԱՅՆ ԺՐԱԳՐԻ ՀՈԳԵՆՈՐ ԻԺՈՒՆՈՒԹՅԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կազմեց

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՅ

(Միաբան Մաղնույ Ս. Գեորգ եկեղեցուց)



Յարմար է կրօնուսուցչներին մեռրի տակ ունենալ իմ
«Կասապիրը կրօնի» նոր-ուխտի նիւթի մշակութիւնը:

2(07.5)

U-15

ТИФЛИСЬ

Типография П. Маргиросианца, Орбел. ул., д. № 1-2.

1894

ԳԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

2(075)

Ա. ՏԱՐԻ

U-15

„Եւ ուսուցիչ որդւոց ձերոց
խօսել զոսա ի նստել ի տան.
Եւ ի գնալ ի ճանապարհի եւ
ի ննջել եւ ի չառնել“:

Մ. Մ. Գլ. Ժ. 19.

ՀԱՄԱՅՆՈՒ ԹՐԱԳՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԻԺԽԱՆՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ ա զ յ Ե ց

Ս Ա Հ Ա Կ Գ Ա Հ. Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն Յ

(Միաբան Մոզնույ Ս. Գեորգ եկեղեցու)

БИБЛИОТЕКА
ИМПЕРАТОРА
ВОСТОЧЕДЕНІЯ
Академии Наук
СССР

Յարմար է կրօնուսույցներին ձեռքի տակ ունենալ իմ
«Գասազիրք կրօնի» նոր-ուխտի նիւթի մշակութիւնը:



ТИФЛИСЪ

Типографія И. Маргиросіанца, Орбел. ул., д. № 1—2.

1894.

2010

2 10011

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го іюля 1894 г.

50403 - ահ



36118-66



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ.Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Սրբազնագրյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց,
Ժայրագրյն Պատրիարքի Համազգական Նա-
խամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելա-
կան Մայր Աթոռոյ Սրբոց Կաթողիկէ Էջ-
միածնի:

Յ Ա Ն Կ

§.	Երես.
1. Աստուած կանչում է Աբրահամին.	5.
2. Աստուած չիշում է իւր խոստումը	6.
3. Աւետումն Քրիստոսի.	6.
4. Քրիստոսի Ծնունդը.	8.
5. Տասն և երկու տարեկան Յիսուսը գը նում է տաճար	12.
6. Յիսուսի մկրտութիւնը	13.
7. Մարիամ և Մարթա.	15.
8. Յուդա	17.
9. Ոտնալուաց.	18.
10. Խորհրդաւոր ընթրիք.	20.
11. Յիսուս Գեթսեմանի պարտիզում.	23.
12. Յիսուսի մատնութիւնը.	24.
13. Յիսուս քահանայապետի առաջ.	24.
14. Յուդայի մահը.	25.
15. Յիսուս Պիղատոսի առաջ	26.
16. Յիսուսի խաչելութիւնը.	28.
17. Թաղումն	32.
18. Յիսուսի չարութիւնը.	33.

§ 1.

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Կ Ա Ն Զ Ո Ւ Մ Է Ա Ր Ր Ա Ճ Ա Մ Ի Ն

Խառան քաղաքում մի մարդ էր ապրում՝
անունն Աբրահամ: Նրա հայրը և բոլոր խա-
ռանցիները կուռք էին պաշտում, իսկ ինքը՝
ճշմարիտ Աստուծուն: Մի անգամ Աստուած ա-
սաց Աբրահամին. «Թող քո հայրենիքը, բա-
րեկամները, հօրդ տունը և զնա՛ն այն երկիրը,
որ ես քեզ ցոյց կտամ. ես քեզ կօրհնեմ. քո
օրդ իկներից մինը դուրս կգայ և կօրհնէ երկրիս
վրայի բոլոր ազգերին»:

Աբրահամը հեռանում է Խառանից: Այս
բանից յետոյ Աբրահամն իսկոյն դուրս եկաւ
Խառանից. հետն առաւ իւր կին Սառային,
եղբորորդի Լոփտին, ծառաներին, իւր հարըս-
տութիւնը և զնաց Քանանացոց աշխարհը,
որն Աստուած խոստացել էր նրան:

Երբ Աբրահամը Քանան հասաւ, Աստուած
նորից երևեցաւ նրան և ասաց... «Նչ, սա է
այն երկիրը, որ ես քեզ խոստացայ. այս եր-
կիրը տալիս եմ քեզ և քո օրդուց»:

Արրահամն այնտեղ մի սեղան շինեց, զոհ բերաւ Աստուծու համար և շնորհակալութիւն արաւ:

§ 2.

ԱՍՏՈՒԸԾ ՅԻՂՈՒԹ Է ԻՌ ԽՈՍՏՈՒՄԸ

Աստուած Արրահամին խոստացել էր, որ նրա որդիներանցից մինը դուրս կգայ և կօրհնէ երկրիս վրայի բոլոր ազգերին:

Այդ օրից անցել էր երկու հազար տարի: Աշխարհիս բոլոր մարդիկը վատացել էին այնպէս, ինչպէս մի ժամանակ Խառանի բնակիչներն էին:

Աստուած մարդկանցը շատ էր սիրում. քանի քանի անգամ մարգարէներ ուղարկեց, որ խրատեն, բայց մարդիկը չլսեցին նրանց: Աստուած լիշեց իւր խոստումը և ուղարկեց իւր միակ որդի Յիսուս Քրիստոսին, որ չար մարդկանցը բարի դարձնէ:

Լսեցէք, հիմա ես պիտի պատմեմ, թէ Աստուած ինչպէս ուղարկեց իւր որդուն:

§ 3.

ԱԻԵՏՈՒԹՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Արրահամի բնակած երկրում մի քաղաք կար՝ անունը Նազարէթ: Այնտեղ կենում էր մի

կոյս աղջիկ, որի անունը Մարիամ էր: Նա շատ բարի էր և ամեն ժամանակ Աստուծուն աղօթում էր: Կրահամար էլ Աստուած նրան ընտրեց, որ Յիսուս Քրիստոսի մայրը լինի:

Մի անգամ, երբ Մարիամն աղօթում էր, Գաբրիէլ հրեշտակը երևաց նրան և ասաց. «Ուրախացիր, Մարիամ, Աստուած քեզ հետ է»: Երբ մարիամը հրեշտակին տեսաւ, վախեցաւ ու մտածում էր իւր մտքում, թէ ինչու համար է հրեշտակն իրա մօտ գալիս և ողջունում: Հրեշտակն ասաց. «Մի վախիր, Մարիամ, Աստուած քեզ շատ է սիրում, դու մի որդի կունենաս և նրա անունը Յիսուս կգնես. նա Աստուծու որդի կկոչուի և բոլոր մարդկանց փրկիչը կը լինի»:

Մարիամը չհակառակեց: Նա խոնարհ կերպով պատասխանեց և ասաց. «Ես Աստուծու աղախինն եմ, ինչպէս նրա կամքն է, թող այնպէս էլ կատարուի»: Այս պատասխանից յետոյ հրեշտակը հեռացաւ Մարիամից:

Գաբրիէլ հրեշտակի Մարիամ կուսին աւետիք տալը՝ տօնում ենք ապրիլ ամսի եօթին: Այդ տօնի անունն է Աւետումն:

§ 4.

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հին ժամանակ, երբ թագաւորներն ուղում էին իմանալ, թէ իրանց հրկրի մէջ քանի մարդ կայ, հրամայում էին, որ ամեն մարդ գնաց իւր հայրենի քաղաքը և ապա սկսում էին համարել: Այսպիսի մի հրաման էլ դուրս եկաւ Հէնց այն ժամանակներում, երբ Յիսուս Քրիստոսը պիտի ծնէր:

Յիսուսի ծնողները՝ Յովսէփն ու Մարիամը կենում էին Նազարէթ քաղաքում: Բայց որովհետև Յովսէփը Բեթղեհէմցի էր, այդ պատճառով վերկացաւ և շտապով եկաւ իւր հայրենի քաղաքը: Յովսէփն աղքատ էր. քաղաքի մէջ չկարողացաւ տուն վարձել, դրա համար էլ վերեկաւ քաղաքից դուրս մի այրի մէջ, ուր հովիւները վատ եղանակին իրանց ոչխարներն էին բերում:

Այդ գիշեր Յիսուսը ծնաւ: Ծնողները խանձարուրի մէջ փաթաթեցին և մտնի մէջ դրին:

Բեթղեհէմը մեր երկրի նման ցուրտ չէ, այնտեղ տաք է — ձմեռը դրսում կարելի է քնել: Այն երկրի հովիւները ամառ ձմեռ իրանց ոչխարները դուրսն են պահում, միայն անձրևային եղանակին այրն են բերում:

Երբ Յիսուս ծնաւ, ոչ ոք չգիտէր, հովիւները դաշտումն էին և իրենց ոչխարներն էին արածացնում: Այդ ժամանակ ոգի մէջ հրեշտակ երևաց: Այս բանից հովիւները վախեցան: Հրեշտակն ասաց. «Մի վախենաք, ես ձեզ և բոլոր մարդկանց մեծ ուրախութիւն եմ յայտնում — ձեզ համար Բեղղեհէմում փրկիչ է ծրնել. նա այրումն է. խանձարուրով պատած է և մտնի մէջ դրած»: Այս խօսքերից յետոյ՝ յանկարծ մի խումբ հրեշտակներ երևացին, որոնք երդում էին և ասում. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն».— փառք Աստուծուն երկնքումը, այսուհետև երկրիս վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն կլինի:

Այնուհետև հրեշտակները հեռացան: Հովիւներն ասացին մէկ մէկու. «Գնանք Բեթղեհէմ և տեսնենք այս ինչ բան է, որ Աստուած ցոյց տուաւ մեզ»: Նրանք շտապով եկան և գտան Մարիամին, Յովսէփին և մանկանը խանձարուրով փաթաթած ու մտնի մէջ դրած: Երբ տեսան, փառք տուին, Աստուծուն և ամեն պատահողի պատմում էին և ասում, որ փրկիչը ծնուել է:

Յիսուսի ծնունդը կատարում ենք յունուա-
րի վեցին:

Տ Ե Ղ Ծ Ն Լ Դ Ե Ա Ն

Այսօր տօն է ծննդեան, աւետիս,
Տեառն մերոյ եւ յայտնութեան,
աւետիս,

Այսօր մեր Տիրոջ ծննդեան տօնն է, աւետիս,
Այսօր մեր Տիրոջ չայտնութեան օրն է, աւետիս:

Այսօր սուրբ կոյսն անապական ա-
ւետիս,

Ծնաւ, երբ, զանմահ արքայն ա-
ւետիս,

Այսօր մաքուր սուրբ կոյսը ծնաւ, աւետիս,
Եւ բերաւ անմահ թագաւորին, աւետիս:

Այսօր հրեշտակք յերկնից իջան,
աւետիս,

Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն,
աւետիս,

Այսօր հրեշտակները երկնքից իջան, աւետիս,
Մեզ հետ օրհնում են անմահ թագաւորին, աւետիս:

Ջ Ե Ր Ա Կ Ե Ն Ծ Ն Լ Դ Ե Ա Ն

Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայսմ՝ աւուր յայտնեցաւ,
Հովիւք երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի:

Մեծ և զարմանալի խորհուրդ է, որ այսօր
չայտնուեց—հովիւները հրեշտակների հետ երգում են
և աշխարհին աւետիք տալիս:

Ծնաւ նոր արքայ
Դ Բ Ե Թ Ղ Ե Տ Է Ժ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք,
Քի վասն մեր մարմնացաւ:

Նոր թագաւոր ծնաւ Բեթղեհէմ քաղաքում,
մարդկանց որդիք, օրհնեցէք, որովհետեւ նա մեզ
համար ծնաւ:

Ամբուելին երկնի և երկրի
Դ Խ անձարուրս պատեցաւ,
Ոչ մեկնելով Դ Հօրէ
Դ սուրբ այրին բազմեցաւ:

Նա, որի համար երկինքն ու երկիրը բաւական
չեն, բարուրի մէջ փաթաթուեց, Հօրիցն անբաժան
մնալով՝ սուրբ այրի մէջ բազմեց:

§ 5.

ՏԵՄԵՐԿՈՒ ՏԵՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ ԳՆՈՒՄ Է ՏԱՃԱՐ

Հրէաները մեզ նման ամեն քաղաքում կամ դիւղում եկեղեցիներ չունէին, ամբողջ երկրի մէջ մի հատ տաճար կար, այն էլ Նրուսաղէմ քաղաքումն էր: Գրա համար ամեն տարի անթիւ ուխտաւորներ էին գալիս, մանաւանդ Զատիկի տօնին: Ուխտաւորներն այնքան շատ էին լինում, որ քաղաքի մէջն այլ ևս տեղ չէր լինում, քաղաքից դուրս՝ լեռների վրայ վրաններ էին խփում: Տօնը եօթն օր էր տևում:

Յիսուսի ծնողներն էլ Զատիկի տօնին ամեն տարի ուխտ էին գնում: Երբ Յիսուս սասն երկու տարեկան դարձաւ, նրան էլ հետները տարան: Այս առաջին անգամն էր, որ Յիսուս գնում էր Աստուծու տունն աղօթելու:

Տաճարից վերադառնալը: Տօնի օրերն անցան: Ծնողները կամենում էին Նազարէթ դառնալ, բայց յանկարծ տեսան, որ Յիսուս մանուկն այլ ևս չկայ: Քաղաքի մէջ երկար փնտռեցին, բայց լիզնուր: Կարծում էին թէ ծանօթների հետ Նազարէթ դարձած կլինի, դրա համար մի օրուայ ճանապարհ եկան:

գտան իրանց ծանօթներին. հարց ու փորձ աքրին, տեսան որ չկայ: Նորից յետ դարձան Նրուսաղէմ: Մի օր էլ այստեղ փնտռեցին և հազիւ երրորդ օրը տաճարում գտան:

Յիսուսն այստեղ վիճաբանում էր վարդապետների հետ—նրանց հարցեր էր տալիս և պատասխանում առաջարկած հարցերին: Ամենքըն էլ զարմանում էին նրա իմաստուն պատասխանների վրայ:

Ծնողներն այս օր տեսան, շատ ուրախացան: Մայրն ասաց: «Որդե՛ակ, այդ ի՛նչ բերիք մեր գլխին. հայրդ և ես այս երեք օր է քեզ ենք փնտռում»: Յիսուս պատասխանեց. «Մի՛թէ չգիտէիք, որ ես իմ հօր տանը կլինեմ»: Սրանից յետոյ Յիսուս ծնողների հետ Նազարէթ դարձաւ, հնազանդ էր և լսում էր նրանց խօսքը:

Փոքրիկ մանուկներ, դուք էլ Յիսուսի նրման պիտի սիրէք Աստուծու տունը և հնազանդ լինէք ձեր ծնողներին:

§ 6.

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յիսուս գալիս է Յովնաննիսի մօտ: Յորդանան գետի ափերում մի իմաստուն մարդ

էր բնակուում՝ Յովհաննէս անունով: Մարդիկ ամեն կողմից սրա մօտ էին գալիս. խորհուրդ էին հարցնում և խոստովանում էին իրանց սխալները: Ով իւր սխալները խոստովանում և խոստանում էր այլ ևս չկրկնել, Յովհաննէսը նրան լողացնում՝ մկրտում էր Յորդանանի մէջ: Սրանով Յովհաննէսն ուզում էր ասել, ինչպէս որ ես ձեր մարմինը մաքրեցի, այնպէս էլ դուք ձեր սրտերը պիտի մաքրէք:

Յիսուս ևս եկաւ Յովհաննիսի մօտ մկրտուելու: Դեռ չէր մօտեցել Յիսուս, Յովհաննէսը հեռուից ճանաչեց նրան և բարձր ձայնով ասաց իւր մօտ կանգնողներին. «Ահա գալիս է Աստուծու զառը, սա պէտք է մարդոց ազատէ իրանց մեղքերից»:

Յիսուս մօտեցաւ Յովհաննիսին և յայտնեց, որ կամենում է նրանից մկրտուել: Յովհաննէսը մերժեց և ասաց. «Ըս պէտք է քեզանից մկրտուեմ, դ՞ու ես ինձ մօտ գալիս»: Յիսուս պատասխանեց. «Մկրտիր ինձ, որովհետեւ դու տարիքով ինձնից մեծ ես»: Սրանից յետոյ Յովհաննէսը չհակառակեց և մկրտեց Յիսուսին Յորդանան գետի մէջ:

Հրաշք: Երբ Յիսուս մկրտուեց և ջրից դուրս եկաւ, երկինքը բացուեց. սուրբ Հոգին

աղաւնու կերպարանքով իջաւ Յիսուսի վրայ. երկինքը բացուեցաւ և ձայն եկաւ, որ ասում էր. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի, դրան լսեցէք»: Զատ քիչ մարդիկ գիտէին, որ Յիսուս Աստուծու որդին էր, բայց այժմ պարզ կերպով տեսան և հաւատացին, որ Քրիստոս Աստուծու որդին է: Դրա համար էլ մկրտութեան օրը՝ մարդիկ իրար շնորհաւորում են և ասում. «Չնորհաւոր յայտնութիւն»:

Յիսուսի մկրտութեան տօնն ամենայն տարի կատարում ենք յունվարի վեցին:

§ 7.

Մ Ա Ր Ի Ա Մ Ե Ի Մ Ա Ր Թ Ա

Յիսուս ըժշկում է: Յիսուս իւր մկրտութիւնից յետոյ սկսեց շրջել երկրի մէջ և ամեն տեղ քարոզում էր և բժշկում—կուրերին աչք էր տալիս. կաղերին՝ ոտք. խուլերին՝ լսողութիւն և մեռելներին՝ յարութիւն: Ով տխուր էր, մխիթարում էր. հարուստներին ասում էր, որ իրանց ունեցածից աղքատներին էլ բաժին հանեն: Վատ մարդկանց խրատում էր, որ լաւանան, ապա թէ ոչ Աստուած կպատժէ: Սյապէս Յիսուս օր ու գիշեր հանդիստ չունէր, շրք-

չում էր ամեն տեղ և քարոզում էր մարդկանց, որ վատ բաներից հեռանան և լաւ բաներ անեն: Ինչոր խօսքով քարոզում էր, նոյնը զորձով էլ ցոյց էր տալիս:

Այսպէս՝ մի անգամ Յիսուս քարոզելով եկաւ իւր ծանօթ Ղազարոսի մօտ, որ կենում էր Բեթանիա գիւղում՝ Երուսաղէմին մօտիկ: Այս Ղազարոսը երկու քոյր ունէր, մինի անունն էր Մարիամ, իսկ միւսինը՝ Մարթա: Երկու քոյրերն էլ Յիսուսին շատ էին յարգում: Երբ իմացան, որ Յիսուս հիւր է եկել, էլ չգիտէին, թէ ինչպէս պատիւ տան նրան: Մարիամը նստեց Յիսուսի մօտ և ուշադրութեամբ լսում էր նրա քարոզները: Յիսուսի խօսքերն այն աստիճան դուր եկաւ Մարիամին, որ նա ամենայն ինչ մոռացաւ: Իսկ մարթան մեծ պատրաստութեան մէջ էր—աշխատում էր, որքան կարելի է, լաւ կերակուրներ պատրաստել Յիսուսի համար:

Մարթան երբ տեսաւ, որ Մարիամը չի գալիս իրան օգնելու, դարձաւ Յիսուսին և ասաց. «Տէր, չէս տեսնում, որ քոյրս ինձ մենակ է թողել, ասա՛, որ գայ և ինձ օգնէ»: Յիսուս պատասխանեց. «Մարթա՛, Մարթա՛, դու շատ բաներով ես զբաղուում, քիչն էլ բաւական է: Ի՞նչ կարող ես քո քոյր Մարիամից օրինակ վերցնել, նա աւելի լաւ ձեռով է պատ-

ւում ինձ, նա լսում է իմ քարոզները—ով ինձ ուզում է յարգել, թող իմ խօսքերը լսէ:

Սրանով Յիսուս ուզում է ասել, որ Մարիամի նման լսենք, իսկ Մարթայի պէս աշխատասէր լինենք:

§ 8.

Յ Ո Ւ Դ Ա

Յիսուս ունէր 12 աշակերտ. նրանք կոչւում էին առաքեալներ: Աշակերտներից մինը, որի անունը Յուդա էր, լաւ մարդ չէր, փող շատ էր սիրում: Մի անգամ սա ծածուկ զնաց Յիսուսի թշնամիների մօտ և ասաց. «Ինձ ինչ կտաք, որ Յիսուսին ձեզ մատնեմ»: Նրանք էլ երեսուն արծաթ փող խոստացան:

Յիսուս գիտէր այս բանը, սակայն ոչինչ չէր ասում, աշխատում էր մի ձևով զգուշացնել աշակերտին: Բայց ի զուր:

Ջատիկի տօնը մօտեցել էր: Յիսուս տեսաւ, որ Յուդան պիտի մատնէ և իւր մահը մօտենում է, ուզեց մի անգամ էլ իւր բոլոր աշակերտների հետ միասին Ջատիկի ընթրիքն ուտել և մի անգամ էլ ցոյց տալ, թէ որքան սիրում է նրանց:

36118-66

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

МЭС ЧУВ ЧР. ПУРУС
ГСС БИБЛИОТЕКА
ЗУУՄ-ԱՐՄ ԵՍՐ
ИМ А. МЯСНИКОВА
У. УСУУ

§ 9.

Ո Տ Ն Ա Լ ՈՒ Ն Ա Յ

Աւագ Հինգշաբթի օրը Յիսուս պատուիրեց իւր աշակերտներին, որ մի վերնատան մէջ ընթրիք պատրաստեն: Երեկոյեան, երբ Յիսուս սեղան նստաւ տասն երկու աշակերտների հետ, ասաց. «Սրտով ցանկացայ այս ընթրիքը ձեզ հետ ուտել՝ չարչարուելուցս առաջ»: Այս ասելուց յետոյ, Յիսուս ընթրիքից վեր կացաւ. հանեց վերևի շորերը. մէջքին մի ղենջակ կապեց. ջուրն ածեց կոնքի (աւաղանի) մէջ և սկսաւ աշակերտների ոտները լուանալ ու այն ղենջակով սրբել: Ոտները լուանալուց յետոյ ընթրիքի նստաւ և տխուր ձայնով ասաց իւր աշակերտներին: «Ձեզանից մինն այս զիշեր պիտի մատնէ ինձ»: Յիսուս սրանով վերջին անգամ կամենում էր իրան մատնող աշակերտին զգուշացնել, բայց ի զուր: Յուզան այնպէս էր ցոյց տալիս իրան, որպէս թէ ինքը չէ մատնողը և ոչինչ չգիտէ:

Աշակերտներն այս խօսքի վրայ տրտմեցան և միմեանց երեսին էին նայում, չգիտէին թէ ում համար է ասում: Ամեն մէկն առանձին առանձին տեղից վեր էր կենում և ասում. «Տէր, մի՞թէ ես եմ»: Յիսուս պատասխանեց.

«Վայ այն մարդուն՝ որ կմատնէ ինձ, աւելի լաւ էր, որ նա իսկի ճնուած չլինէր»: Այն ժամանակ Յուզան էլ ասաց. «Մի՞թէ ես եմ վարդապետ»: Յիսուս պատասխանեց. «Դու ես ասում», յետոյ աւելացրեց, «զնա ինչ որ անելու ես, շուտով արա՛»: Յուզան երբ տեսաւ, որ իւր մատնութիւնը գիտէ Յիսուս, ամօթից էլ չկարողացաւ մնալ այնտեղ, վերկացաւ և գնաց Յիսուսի թշնամիների մօտ: Արդէն երեկոյ էր—մթնել էր:

Աւագ Հինգշաբթի օրը քահանան եկեղեցում կատարում է ոտնալուսլի կարգը և կարագ իւղ է բաժանում:

Ո Տ Ն Ա Լ ՈՒ Ն Ա Յ Ի Չ Ա Ր Ա Կ Ա Ն

Այսօր կանգնեցաւ աւագան մրկրտութեան 'ի թողութիւն մեղաց մերոց:

Մկրտութեան աւագանն այսօր հաստատուեցաւ մեր մեղքերի թողութեան համար:

Այսօր տէրն մեր լուանայր զոտս աշակերտաց և պատուիրէր զայս ասելով:

Այսօր մեր Տէր Յիսուսը լուանում էր իւր աշակերտների ոտները և պատուիրելով ասում էր.

**Մի ոմն 'ի ձէնջ, ասէ, եղբարք,
մատնելոց է զիս 'ի մահ և որոշե
յաշակերտացդ:**

«Ձեզանից մէկը, եղբայրներ, ինձ մահուան
պիտի մատնէ և բաժանուի (հեռանայ) աշա-
կերտներիցդ:

**Չայն լուեալ Պետրոսի՝ ակնար-
կէր առ Յովհաննէս, հարցանել թէ
ով իցէ:**

Այս որ լսեց Պետրոսը, նայեց Յովհաննիսին
հարցանելու, թէ ով կարող է լինել դա:

**Իանն գոր ասաց Յիսուս, տշտմե-
ցոյց զիւր զաշակերտան և խռովե-
ցան ամենեքեան:**

Այս խօսքը որ ասաց Յիսուս, իւր աշակերտ-
ներին տրտմեցրեց և ամենքը շփոթուեցան:

§ 10.

ԽՈՐՀՐԴԱՌՈՐ ԸՆԹՐԻՓ

Երբ Յուզան գուրս գնաց, Յիսուս ասաց.
«Ձեզ մօտ երկար չեմ կարող մնալ, նոր խրատ
եմ տալիս ձեզ—գուք իրար այնպէս պիտի
սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի—սրանով
ձեզ կճանաչեն, որ գուք իմ աշակերտներն էք»:

Յիսուս կամեցաւ իւր մահուանից յետոյ
մի այնպիսի լիշատակ թողնել, որ երբ ինքն
այլ ևս երկրի վրայ չի լինիլ, իրան միշտ լի-
շեն: Ուստի ընթրիքից յետոյ առաւ բաղարջ
հաց. օրհնեց. կտրեց. աշակերտներին բաժա-
նեց և ասաց. «Առէք, կերէք այս է իմ մարմինը»:
Յետոյ մաքուր զինին առաւ. դոհացաւ. տուաւ
նրանց և ասաց. «Խմեցէք զրանից ամենքդ,
սա իմ արիւնն է, որ թափոււմ է ձեր և շատ
ուրիշների մեղքերին թողութիւն տալու համար
— ամեն անգամ, երբ խմէք այս բաժակից,
լիշեցէք ինձ»:

Պատարագ: Մենք էլ այժմ ամեն տէրու-
նական և տօն օրերին սուրբ պատարագ ենք
մատուցանում. գնում ենք եկեղեցի. քահանային
խոստովանում ենք և պատարագից յետոյ ըն-
դունում սուրբ հաղորդք բաղարջ հացի և զի-
նու օրինակով: Սա միևնոյնն է, ինչ որ Յի-
սուս վերնատանը կատարեց:

Պատարագին շատ երգեր են երգում,
բայց նրանցից մի քանիսը միայն կսփոթենք:

**Յամենայնի օրհնեալ ես Տէր,
օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գո-**

**Հանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէր
Աստուած մեր:**

Ամեն բանի մէջ օրհնուած ես, տէր, օրհնում
ենք քեզ (որովհետեւ մեզ համար շատ բարութիւն-
ներ ես արել), գովում ենք քեզ (որովհետեւ դու
չարչարուեցար և մեզ համար խաղաղութիւն բերիր),
գոհանում ենք քեզնից, աղաչում ենք քեզ, մեր
Տէր Աստուած:

**Միայն սուրբ. միայն տէր. Յիսուս
Քրիստոս. ի փառս Աստուծոյ հօր.
ամէն:**

Մի միայն սուրբը, մի միայն Տէրը, Յիսուս
Քրիստոսն է, հայր Աստուծու փառքով. ամէն:

**Ամէն, հայր սուրբ, Արդիզ սուրբ,
Հոգիզ սուրբ: Օրհնութիւն Հօր
և որդւոյ և սրբոյ Հոգւոյն, այժմ և
միշտ յաւիտեանս յաւիտենից. ամէն:**

Ամէն. Սուրբ հայր, սուրբ Արդի, սուրբ Հոգի.
Օրհնութիւնը լինի Հօրը, Արդուն և սուրբ Հոգուն՝
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**Աստուած մեր և Տէր մեր երե-
ւեցաւ մեզ, օրհնեալ, եկեալ ան-
ուամբ Տեառն:**

Մեր Աստուածը, մեր Տէրը երևեցաւ մեզ՝
Տիրոջ անունով եկողն օրհնեալ լինի:

**Լոյիցի անուն Տեառն օրհնեալ
յայսմ հետէ մինչև յաւիտեան:**

Աստուծու անունն օրհնեալ լինի այժմեանից
սկսած մինչև յաւիտեան,

§ 11.

Յ Ի Ս Ո Ւ Ս Գ Ե Թ Ս Ե Մ Ա Ն Ի Պ Ա Ր Տ Ի Զ Ո Ւ Մ

Հացն օրհնելուց յետոյ Յիսուս իւր աշա-
կերտների հետ միասին դուրս եկաւ Երուսաղէ-
մից և բարձրացաւ Ձիթենեաց լեռը: Այստեղ
Յիսուս ասաց աշակերտներին. «Ինձ պիտի բռն-
են, իսկ դուք ամենքդ էլ կթողնէք ինձ և
կփախչէք»: Աշակերտներն ամենքն էլ միաբե-
րան ասացին. «Մեկի շուտով կմեռնենք՝ քան
թէ քեզ կթողնենք և կփախչենք»:

Ձիթենեաց լեռան կողքին մի պարտէզ կար
Գեթսեմանի անունով: Յիսուս այստեղ եկաւ և
ասաց իւր աշակերտներին. «Նստեցէք այստեղ.
աղօթեցէք. արթուն կացէք, որ փորձութեան
մէջ չընկնէք», իսկ ինքը մի փոքր առաջ դը-
նաց. երեսի վրայ ընկաւ և այսպէս էր աղօ-
թում. «Հայր, եթէ կարելի է, այս նեղութիւնը
(բաժակը) հեռացրու ինձանից, բայց ոչ թէ
աչնպէս, ինչպէս ես եմ ցանկանում, այլ ինչ-
պէս դու»: Յիսուս աղօթքից դարձաւ և տե-

սաւ, որ աշակերտները քնել են և նորից ասաց. «Արթուն կացէք և աղօթեցէք, որ փորձութեան մէջ չընկնէք»: Այս ասաց և դարձեալ զնաց աղօթելու և նոյն խօսքերն էր կրկնում և օղնութիւն խնդրում հօրից: Յիսուս դարձաւ և աշակերտներին էլի քնած դտաւ ու ասաց. «Քանի՛ քնէք, հասաւ ժամը, երբ Յուդան ինձ պիտի մատնէ. վեր կացէք զնանք, ահա՛ զալիս է նա»:

§ 12.

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Մ Ա Տ Ե Ո Ւ Թ Ի Ի Ե Ը

Սրանից յետոյ՝ Յուդան բազմաթիւ զինուորներով ներս մտաւ պարտէզ՝ սրերով, և լապտերներով: Եկողները Յիսուսին չէին ճանաչում: Յուդան նշան էր տուել, թէ ումը որ համբուրեմ, նա է, նրան բռնեցէք»: Մատնիչը մօտեցաւ Յիսուսին, համբուրեց և ասաց. «Քարև վարդապետ»: Յիսուս պատասխանեց. «Յուդա, համբուրելով ես մատնում ինձ»: Այն ժամանակ մօտեցան Յիսուսին, բռնեցին և կապեցին, իսկ աշակերտները թողին և փախան:

§ 13.

Յ Ի Ս Ո Ւ Ս Գ Ա Ճ Ա Ե Ա Յ Ա Պ Ե Տ Ի Ա Ռ Ա Ջ

Յիսուսին կապած տարան քահանայապետի

տի մօտ: Այստեղ ժողոված էին Քրիստոսի թշնամիները, որ նրա համար մահու պատիժ նշանակեն: Քրիստոս ի հարկէ արդար էր, նա Աստուած էր. բացի լաուութիւնից ոչ մէկին վատութիւն չէր արել, բայց նրա թշնամիներն ուզում էին, որ մեղաւոր դուրս բերեն, որպէսզի կարողանան սպանել, դրա համար սուտ վրկաններ պատրաստեցին, որոնք հաստատում էին, թէ Յիսուս Աստուծուն հայհոյել է, ժողովրդին խաբում է և թագաւորի ընդդէմ բաներ է խօսում: Հրէաների օրէնքով, եթէ ցոյց տային նէին, որ մինը Աստուծուն հայհոյել է, այնպիսի մարդը մահու պատիժ էր ստանում: Այստեղ թքեցին Յիսուսի երեսին. բռնեցով ձեռքեցին. ծաղրեցին և մինչև լուսանայլը չարչարեցին:

§ 14.

Յ Ո Ւ Դ Ա Յ Ի Մ Ա Ճ Ը

Յուդան երբ տեսաւ, որ իւր մատնութիւնով Յիսուսի համար մահու պատիժ նշանակեցին, զղջաց. խիղճը տանջեց իրան. վեր առաւ երեսուն արծաթը. լետ տուաւ քահանայապետներին և ասաց. «Ես մեղք գործեցի, անմեղ արիւն մատնեցի». նրանք էլ պատասխանեցին, թէ մեզ ինչ, դո՛ւ գիտես, ինչ ուզում ես արա»: Այն ժամանակ Յուդան փողը դէն ձգեց և զը-

նաց խեղդուեց, որովհետև քանի չիշում էր Յիսուսի արած լաուութիւնները և իւր վատութիւնը, չգիտէր, թէ ինչ անէր, քուն չունէր, դադար չունէր:

§ 15.

Յ Ի Ս Ո Ւ Ս Պ Ի Ղ Ա Տ Ո Ս Ի Ա Ռ Ա Ջ

Հինգշաբթի գիշեր հրէաները Յիսուսի համար մահուան վճիռ նշանակեցին, իսկ ուրբաթ առաւօտեան վաղ՝ կապած տարան Պիղատոս դատաւորի մօտ, որ իրանց վճիռը հաստատէ, որովհետև հրէաները իրաւունք չունէին մահու վճիռ տալու—երկրի մէջ ամենից մեծ դատաւորը Պիղատոսն էր:

Պիղատոսը դուրս եկաւ նրանց մօտ և ասաց. «Ի՞նչ դանգատ ունիք այս մարդու դէմ»: Նրանք պատասխանեցին. «Սա ժողովրդին մոլորեցնում է, ասում է կայսեր հարկ մի տաք և իրան թագաւոր է անուանում»: Այս որ լսեց Պիղատոսը՝ Յիսուսին ներս տարաւ սենեակը, քննեց և տեսաւ, որ բոլորն էլ սուտ է—նախանձում են, որ Յիսուս իրենցից լաւ է քարոզում և իրանց սխալները բռնում է: Պիղատոսը դուրս բերաւ Յիսուսին և յայտնեց ժողովրդին, որ նա արդար է:

Քահանայապետները և ժողովուրդը սկսեցին աղաղակել և ասել. «Եթէ դու մեր վճիռը չես հաստատի, մենք կայսեր գանգատ կանենք»: Պիղատոսը վախեցաւ այս բանից—մէկ որ կայսրից վախենում էր և մէկ էլ չէր ուզում մի մարդու համար երկրի մեծամեծ մարդկանց նեղացնել: Ուտտի վեր առաւ ջուր, ձեռները լուաց և ասաց. «Ես Յիսուսին մեղաւոր չեմ գտնում. նրա արեան մէջ իմ ձեռը չեմ թաթախի. դուք գիտէք, տարէք, և խաչեցէք»: Այս բանի վրայ ժողովուրդը սկսեց միաբերան աղաղակել և ասել. «Թող դրա արիւնը մեր և մեր որդւոց գլխին լինի»:

Հ Ա Ր Ա Կ Ա Ն Մ Ա Տ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ի գիշերին յորում մատնիւր Քըրկիչն մեր ի մահ խաչին, ել ՚ի լեառն Չիթենեաց՝ աղօթելով զայս ասէր. Հայր, անցի յինէն զբաժակս:

Այն գիշեր, երբ մեր Փրկիչը պիտի մատնուէր խաչի վրայ մեռնելու, Չիթենեաց լեառը բարձրացաւ և աղօթելով այս էր ասում. «Հայր, հեռացրու ինձանից այս բաժակը (նեղութիւնը)»:

Իսկ անօրէն աշակերտին թողեալ զգութ սիրոյ նորա՝ փութայր

առ քահանայս և ասէր, ինձ զինչ կամիք տալ, զի մասնեցից զվարդապետն:

Իսկ անօրէն աշակերտը մոռանալով Յիսուսի սէրն ու դուժը, շտապում էր քահանայապետի մօտ և ասում. «Ի՞նչ կտաք ինձ, որ վարդապետին (Յիսուսին) ձեր ձեռք մատնեմ»:

Դողովեալ հրէիցն՝ կռուեցին արծաթ բազում: Առեալ տարան առ Պիղատոս, ասեն. 'ի խաչ հան, 'ի խաչ, զի հայհոյիչ է օրինաց:

Հրէաները հաւաքուեցան, շատ արծաթ կռուեցին, տարան Պիղատոսի մօտ և ասացին. Խաչիր, խաչիր գրան, որովհետև հայհոյում է (չէ հաւանում) մեր օրէնքները»:

§ 16.

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Խ Ա Չ Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Երբ Յիսուսին խաչելու հրամանն առան հրէաները, ուրբաթ առաւօտ զինուորները վեր առան Յիսուսին և տարան, որ խաչեն: Յիսուս ինքն էր տանում իւր խաչափայտը. նա շատ էր յոգնել, որովհետև ամբողջ հինգշաբթի գիշեր չէր քնել, ուստի ճանապարհին վայր ընկաւ խաչափայտի տակ:

Երուսաղէմի մօտ մի բլուր կար՝ անունը Գողգոթա: Որոշեցին, որ Յիսուսին այնտեղ խաչեն:

Երբ Գողգոթա հասան, Յիսուսի ձեռները և ոտները փայտի վրայ մեխեցին—խաչեցին: Պիղատոսը խաչի վերևում մի տախտակ կպցնել տուաւ և նրա վրայ գրել տուաւ, թէ Յիսուսի յանցանքն ինչ է և թէ նրան ինչու են պատժում: Տախտակի վրայ գրուած էր— «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»:

Թէև թշնամիները նախանձից խաչել տուին, բայց Յիսուս էլի աղօթում էր նրանց համար և խնդրում էր հայր Աստուծուն, որ ներէ նրանց սխալը: Զինուորները և հրէաները ծաղրում էին Յիսուսին և ասում էին. «Եթէ դու Աստուած ես, եթէ դու հրէաների թագաւորն ես ինչու չես ազատում քեզ»:

Յիսուսի խաչի մօտ էին կանգնած իւր մայրը և իւր աշակերտ Յովհաննէսը: Յիսուսը ցաւում էր մօր վրայ, ուստի Յովհաննէսին յանձնեց, որ պահէ, պահպանէ իւր մօրը: Այն օրից սկսած՝ Մարիամ Աստուածածինը Յովհաննիսի մօտն էր:

Փամբ տասն երկուսին երկրի վրայ խաւար իջաւ: Փամբ երեքին՝ ճաշից յետոյ Յիսուս ասաց.

«Գարաւի եմ»: Զինուորներէց մինը խզճաց նրան. սպունդր քացախի մէջ թաթախեց և Յիսուսի շրթունքին մօտեցրեց, որ ճաշակէ և ցաւը մեղմէ, որովհետև այդ խմելիքը փոքր ինչ թմրեցնում է:

Սրանից յետոյ Յիսուս բարձր ձայնով ասաց, «Հայր, հոգիս քեզ եմ յանձնում» Այս ասաց, գլուխը խոնարհեց և հոգին աւանդեց:

Այդ միջոցին երկիրը շարժուեց, ժայռերը պատառուեցան և շատ դերեղմաններից արդար մարդիկ յարութիւն առան: Այս որ տեսան, ամենքը լաց էին լինում և ատում էին. «Ուղիղ որ Յիսուս արդար էր և Աստուծու որդի, մենք նրան իզուր խաչեցինք»:

Խ Ա Չ Ե Լ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Ր Գ

Խաչե քո Քրիստոս երկիրպագանեմք և զսուրբ խաչելութիւնդ քո մեծացուցանեմք. և զսուրբ թաղումդ քո փառաւորեմք:

Քրիստոս, քո խաչին երկրպագութիւն ենք տալիս և քոյ սուրբ խաչելութիւնը մեծացնում ենք (չարգում ենք), իսկ քո սուրբ թաղումը փառաւորում ենք:

Եկայք հաւատացեալք, երկր-

պագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, փանգի եկն ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց զպարգևս աշխարհի:

Եկէք, ո՞վ հաւատացեալներ, երկրպագութիւն տանք մեր Քրիստոս Աստուծուն, որովհետև նա եկաւ և իւր խաչովն աշխարհիս պարգևներ շնորհեց:

Սուրբ Աստուած, սուրբ և հօր, սուրբ և անմահ, որ խաչեցար փան մեր, ողորմեա մեզ:

Սուրբ Աստուած, սուրբ և հօր (Աստուած), սուրբ և անմահ (Աստուած), դու որ մեզ համար խաչուեցիր, ողորմիր մեզ:

Փառք սուրբ թաչեղ, ալէլուիա. Խաչելութեանդ, ալէլուիա, Արոյ թաղմանդ, ալէլուիա:

Փառք քո սուրբ խաչին, ալէլուիա, (օրհնեցէք Աստուծուն), փառք խաչելութեանդ, ալէլուիա, փառք սուրբ թաղմանդ, ալէլուիա:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոյ և ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Քո երեսի լոյսը փայլեց մեզ վրայ (շնորհ տուիր մեզ) և մեր սիրտն ուրախացրիր:

Վստղոյ, ցորենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Ինչպէս ցորենի, գինու և ձիթոյ առատութեան ժամանակը (տարիները):

§ 17.

Թ Ա Ղ Ո Ի Մ Ը

Ուրբաթ երեկոյեան Յիսուս մեռաւ: Միւս օրը՝ շաբաթ էր և հրէաների Ջատիկն էր— եթէ Յիսուսին խաչի վրայ տեսնէին, հանգիստ սրտով հաց չէին ուտի, զրա համար էլ զնացին Պիղատոսի մօտ և խնդրեցին, որ իրաւունք տայ Յիսուսի մարմինը խաչի վրայից վերցնելու: Պիղատոսը երբ իմացաւ, որ Յիսուս մեռել է, իրաւունք տուաւ:

Զինուորներից մինը կամեցաւ ճիշտ իմանալ Յիսուսի մահը, վեր առաւ զեղարդը ծակեց կողը, որտեղից արիւն և ջուր բղխեց:

Սրանից յետոյ մի իշխան մարդ եկաւ, անունը Յովսէփ, որ Յիսուսի ծածուկ աշակերտն էր և Պիղատոսից խնդրեց, որ Յիսուսի մարմինն իրան տան: Մի ուրիշ աշակերտ էլ՝ Նիկոզիմոս Անունով, եկաւ և բերաւ անուշահոտ խնկեր: Սրանցով օծեցին Յիսուսի մարմինը. կրտաւով պատեցին, և թաղեցին:

Այնտեղ՝ ուր Յիսուսին թաղեցին, մի պարտէզ կար, պարտիզումն էլ մի նոր փորած գերեզման: Ահա այստեղ դրին Յիսուսի մարմինը՝ մի մեծ քար էլ գլորեցին դրանը և զնացին:

§ 18.

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Չաբաթ օրը հրէաները ոչ մի բանի ձեռք չեն տալիս, որա համար էլ այդ օրը ոչ ոք չըգնաց Յիսուսի գերեզմանը տեսնելու: Բայց երբ շաբաթն անցաւ, կիւրակէ առաւօտը վաղ, գեռարևը դուրս չէր եկել՝ Մարիամ Մակլթաղենացին և ուրիշ կանայք դանազան տեսակ անուշահոտ խնկեր պատրաստեցին և եկան, որ Քրիստոսի մարմինն օծեն:

Կանայքը ճանապարհին ասում էին միմեանց. «Ով կգլորէ մեզ համար գերեզմանի բերանի մեծ քարը»: Բայց երբ մօտեցան, տեսան որ քարը դէն էր ձգած գերեզմանի բերանից: Կանանցից մինը վազեց աշակերտների մօտ իմաց տալու այս բանը, իսկ միւսները գերեզմանը մտան և տեսան, որ մի երիտասարդ հրեշտակ նստած է գերեզմանի աջ կողմում՝ սպիտակ շորերով: Կանայք վախեցան: Հրեշտակն ասաց բնանց. «Մի վախենաք, գիտեմ դուք խաչուած»

Յիսուսին էք որոնում, բայց ինչու էք կենդանին մեռելների մէջ փնտռում: Նա այստեղ չէ, յարութիւն առաւ: գնացէք, ասացէք նրա աշակերտներին, որ Յիսուս նրանցից առաջ կգայ Գալիլիա, դուք այնտեղ կգտնեք նրան, ինչքէս որ ինքն առաջուց ասել է»:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԱԿԱՆ

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա, Ակայք ժողովուրդ, երգեցէք տեառն, ալէլուիա:

Քրիստոս ի մեռելոց յարութիւն առաւ, ալէլուիա, եկէք ժողովուրդ, Տիրոջ համար երգ ասացէք, ալէլուիա:

Յարուցելոյն ի մեռելոց, ալէլուիա, Որ զաշխարհս լուսաւորեաց, ալէլուիա:

Ի մեռելոց յարութիւն առնողին, ալէլուիա, Օրհնենք այն Աստուածը, որ լուսաւորեց մեր աշխարհը:

Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք և զսուրբ թաղումդ քո մե-

ծացուցանեմք, և զսուրբ յարութիւնդ քո փառաւորեմք...

Փառք սուրբ խաչեդ, ալէլուիա, Սրբոյ թաղմանդ, ալէլուիա, Սուրբ յարութեանդ, ալէլուիա:

Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց, նմա փառք յաւիտեանս ամէն:

Քրիստոս ի մեռելոց յարութիւն առաւ. (իւր) մահով չաթեց մահուան, իսկ յարութիւնով մեզ կեանք պարգևեց. նրան փառք լինի յաւիտեանս. ամէն:

Փառք քեզ տէր Աստուած մեր:

Փառք քեզ, մեր տէր Աստուած:

Հայր մեր, որ յերկինս ես. սուրբ եղեցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղեցին կամք քո որ-

պէս յերկինս և յերկրի. զհաց մեր
 հանապազօրդ տուր մեզ այսօր. և
 թող մեզ զպարտիս մեր, որպէս և
 մեք թողումք մերոց պարտապա-
 նաց և մի՛ տանիր զմեզ ի փորձու-
 թիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ.
 զի քո է արբայութիւն և զօրութիւն
 և փառք յաւիտեանս. ամէն:

Մեր հացը, որ երկնքումն ես. քո անունը սուրբ
 լինի. քո թագաւորութիւնը գաշ. քո կամքը լինի
 ինչպէս երկնքումը, նոյնպէս էլ երկրի վրայ. մեր
 ամենօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր. մեր պարտքը թո՛ղ
 մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք
 թողնում. մի՛ ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ չարիցն
 ազատիր, որովհետև թագաւորութիւնը, զօրութիւնը
 և փառքը քոնն է յաւիտեանս. ամեն:



399

399

0026528

0013



Իմ աշխատութիւններն ստանալ ցանկացողները կարող են դիմել՝ 1) Тифлисе: армянскому священнику Сааку Саакянцъ, 2) Կենդրոնական գրափաճառանոց:

Ինձ դիմող կանխիկ վճարողները կստանան 20% զիջումն: Ճանապարհածախսը ինձ վրայ չէ:

Ս Տ Ո Ր Ի Ն Ձ Բ Ջ Ա Ն

ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱՐ

	Ու. Կ.
1. Դասագիրք կրօնի հին-ուխտ	1 75
2. Դասագիրք կրօնի նոր-ուխտ	2 5
3. Մի քանի խօսք հայ կրօնուսույցներին. —	10

ԱԾԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ

4. Սրբազան պատմութիւն հին-ուխտ ք.	
տիպ V տարի.	— 40
5. Սրբազան պատմութիւն նոր-ուխտ ք.	
տիպ IV տարի.	— 40
6. Դասատետր կրօնի †. տիպ III տարի. —	30
7. Դասատետր կրօնի †. տիպ II տարի . —	20
8. Դասատետր կրօնի †. տիպ I տարի. . —	15

БИБЛИОТЕКА
ИСТОРИКО-ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР